

Վարագը տօնեց մեծ յորեկեանը Գալիի մէջ: Հանդէսը սկսաւ ուսուցիչներու կողմէ երգուած «Տէր կեցո» խորժերգով:

Պ. Արտակ Գարրինեան մէկ քանի հակիրճ խօսքերով բացատրեց զիրերու և տպագրութեան նշանակութիւնը:

Յետոյ Մ.Տպագեան դեղալիր խօսքեր ըրաւ օրուան տօնին տոթիւ:

Մ. Քրտջեան ընդհանուր տեսութիւն մը ըրաւ հայկական տպագրութեան և յեղափոխութեան մասին:

Տ. Մահլէպաշեան վերջիշումներ ըրաւ Վասպուրականի-Վարագի ոսկեղարէն: Բանախօսութիւններու մէջ ընդ մէջ երգուեցան «ով մեծասքանչղու լեղու», «Մայրենի լեղու», «Ի բիւր ձայնից», «Երանի նրան»: Արտասանուեցան հատընտիր կատրոններ:

Պ. Արտակ վակեց հանդէսը և անկեղծ, պտտանեկական ողբերութեամբ խօսքեր ուղղելով աշակերտութեան, յորդորեց երթալ գաւառ, նուիրուիլ անոր և լծուիլ գաւառի լուսաւորութեան գործին:

Հանդէսը վերջանալէն ետք աշակերտ, ուսուցիչ, վարդապետ, միաբան կը շարուին աշնանային կանաչութեան վրայ պատրաստուած ձաշասեղանին շուրջը: Ասլա աշակերտական թափօրը կ'երգէ հայրենաշունչ երգեր: Անոնցմէ մէկը օրուան ողբերութենէն արբշխ կ'ընդմիջէ քայլերգը, և հետեւեալ խօսքերը կ'ուղղէ իր ընկերներուն. — «Ընկերներ, ուխտենք այս գերեզմաններուն վրայ, և թող այս խաչքարերը վկայ ըլլան մեր այս ուխտին, որ մենք պիտի հետեւինք մեր սուտջին մեծ ուսուցիչներուն, պիտի քայլենք նայն ուղիէն, ուրկէ գացին անոնք իրենց գործը մեզի կաակելով»: